

1843 ԲԱԶՄԱՎԼԻՊ 1909



ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ
ԿԷ
ՓԵՏՐՈՒԱՐ
Թ. 2

ԱԶԳԱՅԻՆ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ԴՐԱԿԱՆ — ԴԻՏԱԿԱՆ — ՊԱՏՐԱԿԱՆ —

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ՝ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻՊ ԽՄԻՍԹԵՐԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԱԳԻՐԳ

(FLORA ARMENIACA)

ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՍԱՐԱՆ

(HERBARIUM ARMENIACUM)

Մեր կրկին ձեռնարկներն են՝ առ այժմ սաղմնային վիճակի մէջ: Հոս մեր զաղափարն ու ծրագիրը պարզելէ առաջ հարկ կը տեսնենք յիշեցրնել որ Բժիշկ Յովհ. Արթինեան՝ համերաատար խուզարկուն՝ ստէպ հայկական զանազան բոյսերու մասին յօդուածներ գրած և տեսութիւններ հրատարակած է: 1894ի Պոլսոյ Հայրենիք օրագրին մէջ (Թիւ 851, 853, 866) Հ. Մ. Քալունույ Արհեստից և Գիտութեան բաժնագրին բովանդակած հայերէն բոյսերու

անուններուն վրայ քննադատական յօդուածներ գրած է: Նաև դիտողութիւնները պարզարանած է առ Հ. Ղ. Ալիշան՝ Իւր Հայրուսակին վրայ¹: Ինքը բուսաբանութեան դասագիրքը ևս պատրաստած է: Իսկ 1906ի Աճախիտին մէջ ՏՈՒՆԿԵՐԸ ԵՒ ԱՆՈՒՅ ՀԱՅԵՐԷՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ վերնագրի տակ պատկերազարդ յոյժ շահեկան յօդուածներ զետեղած է՝ որոնք ապա 68 էջ զբոյց կի ձեռով տպագրելով հրատարակած է և օրինակ մը ևս մեզի նուիրելու հաճոյքն ըրած է:

Այս վերջին հրատարակութեան առթիւ Պր. Հ. Աճառեան 1908ի թիւ 12 Հանգէս Ամսօրեայի մէջ (էջ 379-81) Մատենադարանի² տեսութիւն մ'ընելով ի մէջ այլոց կը յայտնէ.

« Բուսական բառերը ճշդիւր համար, ըստ իս լատինոյ միջոցն է նախ և առաջ դիմել ժողովուրդին, հա-

1. Հ. Ալիշան 1901 Մայիս 28ին պատասխանած է առ Տօքթ. Արթինեան (սակ յիշեալ զբոյցի էջ 31. «Արդե՞ն ծանուցած էի իմ բուսաբանական գործոյ մէջ՝ որ նպատակս էր Բուսաբանութիւն այլ Բուսաբանութիւն. բաժնից այլ Թարգմանութեան մէջ եթէ կան սխալք՝ յետ իմ կարելի քննութեանցս, ընդունիմ ուղղութիւնները, բայց այսուհետև այդպիսի դիտելաց պարագելոյ անհեալ է ժամանակս... »:

Տեսակցելով Տիար Նարայր Բիւզանդացոյ հետ՝ յայտնած է մեզ թէ ինքը Հ. Ալիշանի աշխատասիրութեան ուղղելիքները ճշդիւր զատ գրեթէ տասնապատիկ բառեր ևս աւելցուցած է՝ որոնք իր ըզվ ձեռագիր կը մնան:

2. Նոյն մատենախոսականի զանազան մասերը յապտուած՝ Պոլսոյ Զայն Հայրենեացի մէջ ևս ապուցեալ: (Տե՛ս թիւ 7. 1908. զհկ. 1-2, էջ 61 :

աքել զանազան կողմեր ցրուած հայոց բուսաբանական բառերը, որոշել զանոց դիտակէն համագործնեով և այս գործը վերջացնելէ ետք անցնել մասնաշինարարութիւն, եղած արդիւնքը համեմատել անոց հետ և տարբերութիւնները գտնելով՝ նոր բուսաբանութեանց հետամուտ լինել: Այս գործը սակայն բանաշինարարութեան գործը չէ և բուսաբանի մը միայն կրնայն սպասել:

Մինք ասոր լիուի համոզուած ըլլալով 1907ին գործի ձեռնարկելէ առաջ հրատարակեցինք շրջաբերական գրութիւն մը՝ որով կը դիմէինք ժողովուրդին հաւաքելու ֆնայիսարհի մէջ ինքնաբերաբար ծնող ծաղիկող տունկերու նմուշներ. բուսաբան (herboriser) և իւրաքանչիւր բուսային ընկերացեցելով պիտակ մը՝ վրան գրուած առնունք, բնականաւոր, գործածութիւնը, և այլն՝ յղել մեր հասցէին:

Ձանազան կողմերէ հասան մեզի հայկական բոյսեր, և սկսանք պատրաստել Համալսարանական աւարտաճառ մը: Կարծուածէ շատ աւելի դժուարին գործի մը ձեռնարկած ըլլալին շուտով հասկցանք. վասն զի Հայաստանի կատարեալ բուսագիտական պատրաստելու համար չի բաւեր բուսաբան ըլլալ, այլ անհրաժեշտ է ունենալ հայկական մասնաւորաբան և Հայկական Բոյսերու հաւաքածոյ. ասոնցմէ զատ պէտք է ունենալ տրամադրութեան ներքե ճշկաբանական պարտէզի մը ամբողջական բուսաբանը և անոր ճոխ գրաստունը:

Պ. Աճառեան 380 էջին վերջեր կ'ըսէ.

«Առնչեցնելու ճշգրտան համար հեղինակը. (Արթիւնեան) ինչպէս քանի մը տեղ կ'աւանդէ, զիմած է հետեւալ միջոցներուն. կամ ստացած է բոյսերէն նմոշ մը, կամ զաղթականներու միջոցով գտած է զայն Նշանիի բուսաբանական պարտէզին մէջ և կամ ընդարձակ նկարագրութեանց միջոցով երևան հանած է: Վերջին միջոցը խուսափելի է, որովհետեւ բոյսի մը նկարագրութիւնը բուսաբանութենէ ճշտ ներկայացնելու համար՝ հարկաւոր է թել մը բուսաբան ըլլալ, ինչ որ դժուար է սպասել մերիներէն:

Թիւրախ բոյս մը ճշգրիտ նկարագրելը ո՛չ միայն մերիներուն համար դժուար է, այլ նոյն իսկ օտար հմուտ բուսաբաններու նկարագրութիւններուն վրայ ևս ստէպ կը հարկաւորուի խուզարկուն չլստահիլ. վասն զի կան բազմաթիւ բոյսեր որոնք մի և

նոյն սեռի (Genus) վերաբերելով՝ ունին չնչին տարբերութիւններ, որոնք շատ անգամ խողորացոյցով կը դիտուին, սերմի, պտուղի, բաժակի, տերեւի մազվզուկներու վրայ, և այլն, և որովհետեւ այդ տարբերութիւնները մնայուն են (իւրաքանչիւր տունկերու սերմերէն առաջ եկող բոյսերու վրայ ևս) այս պատճառաւ կը կազմեն առանձին տեսակներ (Species), որով և կ'ունենան առանձին ուսումնական անուններ:

Մինք մեր հայկական բոյսերը վերլուծելու միջոց գլխաւորաբար Պուսսէյի Flora Orientalis-ի նկարագրութիւններու դիմելու ստիպուած ըլլալով՝ շատ և շատ անգամ տգիտ մնացած ենք և հարկաւորուած թատուայի Բուսաբանին միւնեսթր տեսակի վերաբերող հարիւրաւոր օրինակները աչքէ անցնել և զրատան զրքերու մէջ պատկերներ փնտռել ու բաղդատել առձեռն ու նեցած օրինակին հետ, նոյն իսկ մէկ բոյսի համար մէկ կամ աւելի օրեր զոհելով:

Բոյսերու հայերէն անունները ճշգրիտ կամ հայկական տունկերու բառաբան չիւնելու համար Պ. Աճառեան սապէս իր վերջացնէ իւր գրութիւնը.

«Ամենի ցանկալի ձեռք որ կ'ապաստենք Պ. Արթիւնեանին՝ հայերէնի դիմելն է. Այն ժամանակ երբ Պ. Արթիւնեան սկսած էր աշխատութեան, մեր հայերէնը մտնելի չէր ո՛չ միայն մեզի, այլ նոյն իսկ օտարներուն. հիմա այս գծաւորութիւնը վերցած է. Ասիկէ զատ կովկասէ՝ ուր ինչպէս անհամար հայերէն բուսական բառեր կան հայ ժողովրդին մէջ, իր ամէն յարմարութեան ներով ազատ ապաւնէզ կը բանայ բուսաբաններուն: Պ. Արթիւնեանի պէս աշխատողը, բուսաբանութեան ճշտ և հայերէնի տեղեկ անմասնաւորութիւն մը մէկ ամառուան մէջ դիւրութեամբ պիտի կրնայ հաւաքել պէտք եղածը, որով պիտի ունենանք Առաջին հայ բուսաբանական բառարանը»:

Մեզ կը թուի որ մէկ ամառուան մէջ՝ մէկ հոգի չէ կարող գլուխ տանիլ այդպիւր

1. Շատ անգամ բոյսի մը սեռը ևս գտնել դժուարին կ'ըլլայ՝ անքան երկու կամ աւելի սեռեր իրարու յար և նման կ'ըլլան, և զանազանութիւնը հասունցած պտուղներու կամ սերմերու վրայ կամ արմատական տերեւներ, եայլն ունենալէ կամ չունենալէ կը կախուի:

սի մեծղի գործ մը, պէտք է որ զանազան ձեռնհաս անձինքներ միասան և զանազան գարուններու, ամառներու, և աշուններու միջոց Հայրենիքի ամէն գաւառներու մէջ՝ որոշ ծրագրի մը հետեւելով խուզարկութիւններ ընեն, ատաղձը պատրաստեն և ապա ձեռնարկեն հրատարակել հայ բուսաբանական խառարան մը՝ որ անշուշտ կատարեալ գործ կը լինի և անհունապէս օգտակար նաև մեր ձեռնարկին։

Մենք համալսարանական դասընթացքի միջոց երկու տարի հետեւած ըլլալով քօֆ. Béguinot տաղանդաւոր բուսաբանի վեհետեկան գաւառի մէջ ըրած ուսումնական արշաւներուն և տունկերու հաւաքումներուն, լիուլի գիտակցութիւնն ունեցանք որ կատարեալ գործ տեսնելու համար անհրաժեշտ հարկաւոր է անձամբ ճամբորդել դաշտերու ձորերու ծովեզերքներու վրայ և բարձրանալ բլուրներ և լեռներ, նշանակելով այդ վայրերուն բարեխառնութեան աստիճանը, հողերու տեսակը, ծովու մակերևոյթին ունեցած բարձրութիւնը և այլն, և հաւաքելով նոյն տեղերու ամէն տեսակ բոյսերու նմուշներէն՝ գիտութեան արդի մեթոտներու պահանջածին համեմատ ձևացնելու է բուսաբան և ըստ այսմ կատարեալ օրինակներու վրայ ընել ուսումնասիրութիւններ։

Հայաստանէ մեզի հասած հարիւրաւոր բուսաբաղուած տունկերը՝ անցեալ տարուան ընթացքին մէջ ուսումնասիրելու միջոց՝ փորձով ըմբռնեցինք որ արժէքաւոր ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԱԳԻՐԻ (Flora Armeniaca) մը ձևացնելու համար, անհրաժեշտ է ունենալ աչքի տակ ճոխ և զուտ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԱՐԱՆ (Herbarium Armeniacum) մը, վասն զի պատգամի հաւասար է լինէտի սա խօսքը. «Հաստ աւելի արժէք ունի նիւթական բոյսի նմուշ մը՝ քան թէ անոր վրայ զրուած նկարագրական մատենադարան մը»։ Եւ յիշատի գրեթէ ստէպ պատահեցանք այնպիսի բոյսերու՝ որոնց նկարագրութիւնը, նոյն ինքն լինէտի, Տէ Գանտուլի, Պուասսիէի և այլ հեղինակներու գրութեանց մէջ իրար-

մէ տարբեր էին, նաև հանդիպեցանք զուտագեղ միևնոյն բոյսի այնպիսի պատկերներու՝ որոնց մանրամասնութիւնը միևնոյն անուան տակ իրարմէ տարբեր էին՝ ըլլայ Սիպտորիի Յունական Ֆլորային, ըլլայ Ռայխտայի Գերմանական Ֆլորայի, ըլլայ Խալիսկայի Գերմանական Ֆլորայի կամ՝ ուրիշ երկիրներու պատկերագրող Ֆլորաներու մէջ, այնպէս որ ուսումնասիրողը տարակոյսի և շփոթութեան մէջ կը մնայ և չի գիտեր՝ ո՞ր մէկուն հաւատալ։ Տարակոյսը այն ատեն միայն կը վերցուի երբ բուսաբաղուած և exsiccata¹ ձևացած օրինակ մը գտնելով բուսաբանի մէջ՝ անոր հետ կը բաղդատէ իւր բոյսը։

Մենք փափաքելով հայկական քառագիթը մը պատրաստել Հայաստանի մէջ ինքնաբերաբար (spontané) աճող բոյսերու մասին, հարկ տեսանք նախ և առաջ Հայկական Բուսաբան մը ձևացնելու հետամտիլ, այնպէս որ երբ միևնոյն բոյսերու կատարեալ օրինակներ առձեռն ունենանք, այն ատեն անոնցմէ լաւագոյններուն պատկերները շինել տալով, պիտի նկարագրենք զանոնք, պիտի դնենք անոնց լատիներէն երկանունները և հոմանիշները, ապա հայերէն գաւառական անունները, մեր բառագիրքերու կամ ուրիշ հրատարակութեանց մէջ անոր վրայ տրուած ծանօթութիւնները, բնակավայրը, բոյսը չորցնողին անունը և իրեն տուած տեղեկութիւնները, և այլն և այլն։

Առ այժմ 340է աւելի զուտ հայկական բոյսերը Յամաքած (exsiccata) ձևացուցած ըլլալով դեռեղեցինք մեր վաճառի Գիտութեանց Թանգարանին մէջ, և ունինք կարգադրելիք 1000ի չափ ուրիշ բոյսեր ևս։

Այս բոյսերը մեր ձեռքն հասնելու մասին տեղեկութիւն մը տալու նպատակաւ,

1. Exsiccata, կը նշանակէ Յամաքած. և կ'ըսուի այն բուսերու նմուշներուն, զոր բուսաբան մը ցամաքընկով՝ անոնց Թուանշան մը յատկացուցած զրքերու մէջ հրատարակած է ուսումնական լատիներէն անունը և Թիւր, ու բոյսի օրինակները ցրուած է զանազան քաղաքներու Բուսաբաններուն մէջ։

աւելորդ չենք համարիր պարզելու որ երբ մենք 1907 Քաղաքապետութիւն 2ի կողմին վրայ բաց նամակի ոճով գրութիւն մը հրատարակեցինք, նոյնը իբր շրջաբերական 150 օրինակ արտատպելով յղեցինք Հայրենիքի ամէն կողմ. զրկեցինք նաև առ Պ. Ա. Քալանթար գրելով նամակ. հայրենասէր խմբագրապետը իսկոյն Մշակի մէջ տպեց զանոնք. (տես Մշակ 1907 թիւ 24 էջ 3): Նմանապէս Մեծ. կ. Բասմաշեանի յղելով սոյն բաց նամակէն զատ մեր Խրագիրը, ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՍԱՐԱՆ վերնագրի տակ հրատարակեց ԲԱՆԱՍԻՐ Թերթին մէջ, տես հատոր Ը, էջ 99—104:

Այս հրատարակութիւններու և մեր կողմանէ ևս գրուած առանձին նամակներու և գիտութիւններու արդիւնքը ստուգել զոհաւորելի եղան: Վասնզի մենք բազմապէս նենգանք ծանօթանալու և թղթակցելու իրօք. Յովակիմ Բեդեկեանի հետ՝ որ Եւթայի մօտ Կայսերական Տնկարանական Պարտէզին բուսարանն է: Պ. Գեորգ Ազնաւուրեանի հետ՝ որ Պոլսոյ և շրջակայից բուսականութեան մասին ֆրանսերէն հրատարակութիւններով նշանաւոր բուսագէտի համբաւն ունի: Պ. Տիգրան Չիթեանի հետ՝ որ Վանքոսակ պատրաստելու հետամուտ է՝ վանսակ մէջ: Տիար Կ. Բասմաշեանի հետ՝ որ վկայեալ ղեկագործ ըլլալով՝ ժամանակին Բուսագիտութեան գրադած է և յօդուածներ գրած՝: Նոյն ինքն Տօքթ. Բ. Արթիւնեան ուղղած է մեզ հմտալից գրութիւն մը, և այլն:

Հայրենիքէն մեզի զրկուած բոյսերու քննադատներն հետեւեալքն եղան. Ալիստանի շրջակայից գրեթէ ամէն տեսակ բոյսերէ բազմաթիւ նմուշներ բուսաբանելով մեր ձեռքը հասցնող ամէն զովեաթի արժանի անձը եղաւ Տէր Կղմէս Աստուրեանը: Իրեն շնորհիւ ստացայ Զէյթունի Պէրուք Տաղ և Գապագ թէյի լեռներու բոյսերէն, զորս հաւաքել տուած էր՝ Կար. Միքեանտիշեանի: Այնթապ քաղաքէն Պ. Ա. Խաչատուրեան 40 տեսակէ աւելի բոյսերու հաւաքածոն մեզ ընծայեց: Մուշէն ժողովուած բոյսերը արդիւնք են Հ.

Անտոն Վ. Ճնտոյանի: Ստորին Բասինի Աղբիւրէ գիւղէն Տէր Բարսեղ Մինասեանց բազմաթիւ ընտիր բոյսեր յղեց իւրաքանչիւրի մասին կարեւոր տեղեկութիւններ հաղորդելով: Սարիղամիշէ քսանի մօտ բուսաբանութեան տունկեր ստացանք Պ. Գր. Սպառնեանցէ: Էրզրումի դաշտապարտէն Պ. Անդրանիկ Եսայեան ուսուցիչ ի Սանասարեան վարժարանի, զրկեց մեզ 75 տեսակ ծաղիկներ: Նոյն Պարոնի միջնորդութեան շնորհիւ Սմբատ Խաչման որբը ժողոված է Կարնոյ շրջակայից բարձունքներէն, շատ տեսակ բոյսերու կտորներ՝ որոնցմէ 20—30 միայն ուսումնասիրելի վիճակի մէջ էին: Տրապիզոնի՝ Զեֆոնոս, Սուրբ սու, Կոստի և այլ գիւղերէն Պր. Վ. Նապասեան 100—ի չափ տունկեր յղեց: Մենք օգտուեցանք նաև այն 50-ի մօտ բոյսերու հաւաքածոյէն, որ Տրապիզոնի Հայկական Քիւլպի անդամները 1890ին Հ. Ալիշանի նուիրած էին: Այն բոյսերու մեծամասնութիւն Պ. Հմայեալ խուշակուեան հաւաքած է, Ֆնացածները Պ. Պետրոս Մարիման և ուրիշներ: Նաև Ստրպատականէ ստացանք ի ձեռն Պ. Մկ. Երեմեանի բազմաթիւ բոյսերու հաւաքածոյ զոր ձեացուցած էր Հ. Տ. Մինասեան՝ Աւարայէ, Խոյէ, Սլավաստէ ժողոված տունկերով:

Թէ է մեզի զրկուած բոյսերուն մեծամասնութիւնը արդի ուսումնարի պահանջած մեթոտին համեմատ պատրաստուած չէին և շատեր ո՛չ մի գրութիւն չունէին, սակայն այնու հանդերձ անոնցմէ լաւագոյններէն 340 տեսակն ուսումնասիրելով՝ 200 էջ գրելու նիւթ ունեցանք: Այս բոյսերը 50 40 հարիւրորդամիզը մեծութեամբ հաստ թղթերու վրայ ազուցանելով իւրաքանչիւրին ընկերացուցինք տպուած պատակներ՝ հետեւեալ ոճով՝:

1. Պ. Բասմաշեան Անիի աւերակներէ ժողոված ըլլալով 10 տեսակ բոյսեր մեզի ընծայելու ազնուութիւնն ունեցաւ:

2. Թէ է Տրապիզոնի բուն Հայաստանի մաս ըլլաւ բոյսեր, սակայն անոր գոլու և յարակից երկիրը չուսուցող ինչպէս նաև Այնթապ, մեր ժրգիրն մէջ կը մտնեն:

3. Կիտաղբաւ տեղերը ձեռագրով լրացուցած ենք՝ իւրաքանչիւր բոյսի պատկանող ծանօթութիւններով:

HERBARIUM ARMENIACUM

(Հայկական Բուսաբան)

FLORA ARMENIACA EXSICCATA. — N.

(ՀԱՅԿԱԿԱՆ ՖԼՈՐԱ ՑԱՄԱՔԱԾ)



Familia (Ցեղ)

Species (Տեսակ)

Nom. Vulg. (Ան. • Բանկ)

Habitat (Բնակայր)

Locus (Տեղի)

Legit (Ցոյց) —

Determ. (Որոշեց) — P. Nerses Diratzouian

Revisit. (վերաքննեց) — Prof A. Béguinot

Մեր ուսումնասիրած և դասակարգած
բոյսերու ցամաքածը 4 ստուար հատոր-
ներ ըլլալով, մեր բացած ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒ-
ՍԱՐԱՆԻ՝ առաջին, հիմնաքարերը եղան:

Իսկ մեր պատրաստած Աւարտաճառի
ամրողջութիւնը 300 էջի հասաւ, ի բաց
առեալ բազմաթիւ հայկական տեսարան-
ներու պատկերները՝ որոնք զետեղած էինք
իտալացւոց մեր երկրի մասին գաղափար
տալու համար: Մեր աշխատասիրութեան
ճակատը սնալէս տպուած է:

L'ARMENIA

E

LA SUA VEGETAZIONE

MATERIALI PER UNO STUDIO FLORISTICO

E

FITOGEOGRAFICO SU QUESTO PAESE

TESI DI LAUREA

DEL

P. NERSES DIRATZOUYAN

Padova 1908. Luglio 7

Որոյ հայերէնն է,

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՒ

ԻՒՐ ԲՈՒՍԱՐԵՐՈՒԹԻՒՆԸ

ՆԻՒԹԵՐ ԾԱՂԿԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ՏՆԿԱՅԻՆ,

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԵ ՀԱՄԱՐ

ԱՅՍ ԵՐԿՐԻՆ ՎՐԱՑ

ԳԱՐՆԵՊՍԱԿԻ ԱՌԱՐՏԱՃԱՌ

Եւայլն

Յուլիս 7էն երեք շաբաթ առաջ ըննիչ
յանձնաժողովի տրամադրութեան յանձնած
էինք մեր ամէն աշխատասիրութիւնները:

1. Մի քանի շաբաթ առաջ, Ազգադական Հանդէս
Խմբագրապետ Բ. Լալայանց նկած ըլլալով ի
Ս. Ղազար ցոյցինք իրեն մեր հաւաքածոն: Մեծապէս
ուրախացաւ տեսնելով որ Հայկական բոյսերը
այնքան խնամքով հաւաքած և ճշակով զետեղած էինք
ընտիր թղթերու վրայ՝ իւրացանչիւրին ընկերացնելով
տպուած պատկերներ: Հմուտ Բրոքէստրը մեզ
յայտնեց՝ որ ինքը ԽուսաՀայաստանի շատ կողմերու բուսականութեան մասին
գրութիւններ ունի, ստուար հատոր մը
մեանապէս չափ:

Ուրախութիւն զգացինք երբ շատերէ լսեցինք զնահատումի խօսքեր, հզակոհ եւ նայութեամբ պատասաբեր ու կուրեոր ձեռնարկ՝ բացատրութիւնները։ Աւելորդ չենք հա-

մարիր հոս զետեղելու նաեւ մեր աւարտահառին սկիզբը տալուած սա ընծայակալը՝ որ առանձին շնորհատրութեան նիւթ եղաւ ազգասէր խաւաքներէն։

LUME DI SAPIENZA ED ESEMPI DI OPEROSA VIRTÙ
DA TE VENNERO O MEKHITHAR PETROSEAN
DA VOI GENEROSI AIUTI ALLA CIVILTÀ D'ARMENIA
O SAMUELE MOORAT O RAFFAELE GHARAMEAN
AI NOMI VOSTRI GLORIOSI
DEDICO QUESTO LEGGERO SEGNO
DI TIMIDO AMORE AGLI STUDI
DI ARDENTE AMORE ALLA PATRIA

Թարգմանութիւնը,

ԼՈՍՏ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՐԻՆԱԿ ԳՈՐԻՐՕՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ
ՔԵԶՄԷ՝ ԵԿԱՆ ՌՎ ՄԻԻԹԱՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ԶԵԶՄԷ՝ ՎԵՀԱՆԶԵ ՄԵԿԻԿԻԿԱՍԻ ԼԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ
ՌՎ ՍԱՄՈՒԷԼ ՄՈՐԱՏ, ՌՎ ՌԱՓԱՅԷԼ ՂԱՐԱՄԵԱՆ
ՁԵՐ ՊԱՆԾԱԼԻ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ
ԿԸ ԶՕՆԵՄ ԱՅՍ ԴՈՑԶՆ ԱՌՀԱԻԱՏԶԵԱՑՆ
ԻՐԿԻԻՂԱՆՍ ՍԻՐՈՑՍ ՈՒՍՄՈՒՆՔԻ
ՁԵՐՄԱՋԵՐՄ ՍԻՐՈՑՍ ԼԱՅՐԵՆԵԱՑ

Ըստ ներքին կանոնադրութեան Համալսարանին բաց ի աւարտահառէն պէտք էր պատրաստել նաեւ անոր բովանդակութեան ամփոփումը ճառական ոճով եւ գոնէ 12 օրինակ պէտք էր յանձնել ըննիչ յանձնաժողովին։ Մենք վիճաբար տպագրած էինք 15 էջի մէջ մեր աշխատասիրութեան համառոտութիւնը 50 օրինակ։ Ամբողջ ուսուցչապետները կարդացած էին զայն. եւ մենք երբ 1908ի Յուլիս 7ին ներկայացանք վերջնական ըննութեան, Բրօքսըններու կանադին դիմաց գրեթէ մէկ ժամ խօսեցանք մեր ձեռնարկին վրայ, դուրս ցատկեցրնելով անոր օգտակարութիւնը՝ թէ

Հայոցս համար եւ թէ ընդհանուր բուսականական գիտութեան նկատմամբ։ Այս հարցաքննութենէն յետոյ, ընդունուեցաւ մեր աշխատասիրութիւնը եւ լիովին գովեստիւք տրուեցաւ մեզ Տօքթօրայի վկայականը։

Իւ որպէս զի մեր ձեռնարկին բովանդակութեան վրայ զաղափար մը տանք, ահա՛ կը հրատարակենք մեր վիճաբար ճառախօսութեան էական մասերը։

ԼԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԱԳԻՐԻՔ

1. Իրբ շրջանաւարտ վազմի աշակերտ Մուրաթ-Ռաֆայելեան վարժարանի եւ իր անդամակից Լուսանորոգն Միքիթարայ Միսրանուիկեան, պարտական ճանչցանք զմզ անոնց անուան նուիրելու մեր առաջին Հայրենաւորէն։

Գիտական գրականութեան մէջ չկայ ստուգիւ բուսականական կամ տնկային աշխարհագրական գիրք մը որ պարզապէս նուիրուած ըլլայ ՀԱՅԱՍՏԱՆԻ, եւ կամ արժանի ըլլայ բառին բուն իմաստով՝ ՀԱՅԱՍՏԱՆ, ՖԼՈՐԻԱ կոչուելու։

Ընդհանուր Արեւելքի բոյսերու վրայ խօսող գրքերու կամ հանդէսներու մէջ ցանցեցուած կը գտնուին մեծաքանակ եւ կարեւոր նիւթերու պա-

չարհեր¹ Հայաստանի բուսականութեան վերաբերող: Անոնցմէ ընդարձակագոյնը, հիմնական և քննական արժէք ունեցողը Խոմոն Պուսսսիէ բուսաբանին² Լատիներէն Flora Orientalis-ն³ է, որուն հինգ հատորները 1867-1884ին տպուած են, իսկ Քաւելուած հատորը 1888ին լոյս տեսած է⁴ հեղինակին մահուանէն վերջը:

Ձանազան նպատակաւորութիւններ (contributions) և բազմաթիւ տեղեկագրեր⁵ (memoires) ըլլայ ընդհանուր Արեւելքի բուսականութեան վրայ, ըլլայ մասնաւորապէս Հայաստանի այս ինչ կամ այն ինչ կողմերու բոյսերու մասին հրատարակուելով⁶ վերջին քսան տարիներու ընթացքին մէջ մեծապէս ճոխացուցին մեր երկրի բուսաբանական գիտութեան հայրենի ժառանգութիւնը:

Հնչականուտ P. A. Saccardo Բրոֆէսորին մեզ յանձնած Աւստրոսաւոնիան նիւթը «**ՎԼԻՑԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ**» վրայ ըլլալով⁷ մեր վրայ պարտք դրաւ ինքնատիպ նպաստ մը բերել մեր Հայրենի Ֆլորային և ինդհանուր բուսականութեան: Պէտք ենք խոստովանիլ որ տրուած նիւթին ընդարձակութիւնը և հանդիպելիք դժուարութիւններու չափի գիտակից ըլլալով հանդերձ սիրաշատոր յանձն առնիք⁸ Բարձր անձնաւորութենէ մեզի առաջարկուածը:

Առաջին և զլուաւոր դժուարութիւնը այս էր որ, մենք 15 տարիներէ ի վեր իտալիա գտնուելով և մեր Հայրենիքին քաղաքական ներկայ շփոթ վիճակին տեղեակ ըլլալով⁹ անկարելի էր հոն իրթալ, գտնէ մի քանի ամսուան համար, որպէս զի տեղույ վրայ զարգաւոր կազմելէ զատ, յաշուէինք բոյսերու հարուստ պաշար մը հեւ տերինք բերելով¹⁰ ըստ այնմ ուսումնասիրութեան ձեռնարկել:

Սակայն անհրաժեշտ կարեւոր ըլլալով մեզ համար առձեռն ունենալ Հայկական բոյսեր¹¹ մը տածեցինք յըլաբերականին ոճով գրութիւն մը հրատարակել և ցուեւի Հայրենիքի մաէն կողմէ: Դեռ զանազան հայ լրագրիներու մէջ կոչ ընել տալ¹² որոնցմով յուսալի էր որ պիտի գտնուէին մեզի ձեռնտու հայրենասէր անձինք:

Մեր շըլաբերականի մէջ տունկեր հաւաքելով բուսաքաղելու մասին տեղեկութիւններ տալէ զատ¹³ ինդդէինք նաև որ իւրաքանչիւր բոյսի ընկերացնէին թղթիկ մը վրան գրուած¹⁴ անունը, տեղին, գործածութիւնը, ծաղկումի թուականը, սիրած հողին տեսակը, և այլն:

Այս շըլաբերականէս 150 օրինակ տպելով

յոյեցինք այն ամէն տեղերը ուր ունէինք ծանօթներ կամ օրինաւոր յոյս թէ մեր կողը լսելի պիտի ըլլար: Մեր «հազմավէպ»ին մէջ տպուելէ զատ, Խուսահայաստան տարածուած ՄԵԱԿ լրագրի մէջ ևս հրատարակուեցաւ: Դեռ լոյս տեսաւ հայ մատուորականներէ կարողացուող ԲԱՆԱՅԷԻ¹⁵ հանդիսին մէջ¹⁶ որ Բարիզ կը հրատարակուէր: Կը փափաքէինք Պուսահայ լրագրիներու մէջ ևս տպագրել¹⁷ որոնք Թըքահայաստանի աւմէն գաւառներու մէջ կը կարդացուին, սակայն յետին խիստ գրաքննութիւնը մեզի արգիւնց, պատճառաւ որ Flora Armena-ի վրայ էր խընդիրը:

1907ի փետրուարէն սկսեալ, մինչև ցարդ գործուն և եռանդուն թղթակցութիւն մը բացուեցաւ մեր և զանազան անձնաւորութիւններու մէջ, որոնք լիուլի խոստումներ ըրին մեզ հայկական բոյսեր հաւաքելով յոյու: Եւ յիրաւի ոմանք 1907ին գարունէն սկսեալ զրկեցինք մեզի ծրարներով տունկեր, ուրիշներ յայտնեցին որ 1908ին պիտի դրեն, իսկ ոմանք մինչև ցարդ լուռ մնացին:

Իրականութիւնն այս է որ մենք 1907ի մայիսէն սկսեալ մինչև այս օր ստացած տունկերով¹⁸ որոնցմէլ ոմանք շահեկան տեղեկութիւններ ունէին¹⁹ մենք պատրաստեցինք նմուշ մը մեր ձեռնարկին:

Պէտք ենք ըսել որ մեզի հասած նիւթերուն մեծամասնութիւնը թէ և զեղեցկագիտօրէն լաւ պատրաստուած չէին, սակայն գոհացուցիչ պայմաններու մէջ էին, Այնթապէ, Ալաիտանէ, Զէյթունէ, Էլզորուէ, Սարգիսմիշէ, Ազգիթիսէ, Մուշէ, Արապատականէ և Տրապիզոնէ զրկուած բոլոր բոյսերը, որոնց թիւը 3000ի կը հասնին և գրեթէ 1500 զանազան տեսակներ են:

Ստուգել ախտան պաշարը մեզ համար մեծապէս յարգի է, վասն զի անոր մէջ կան այնպիսի տունկեր²⁰ որոնք կամ վերելիւրոյ և կամ բնաւ բուսաբաններէ չայցելուած երկիրներէ ժողովուած են: Եւ երբ մտածենք որ անոնք բուսաքաղուած են անվարժ անձներ, և ընդարձակաժաւք երկրէ մը (ուր երկաթուղի գոյութիւն չունի) ճանապարհորդելով, Բոսանդիլ գրաքընչներէն, զեղծ մաքսատնոյրներ²¹ ձեռքբերէն անցնէ վերջը մինչև հոս հասած են, մենք գոհ մնալու իրաւունքն ունինք և նախաձեռնակ ըլլալուստ վրայ ևս կը պարտիք:

Սակայն այսու բնականաբար մենք չենք յաւակնիր ըսելու թէ առ ձեռն ունինք Հայկական

1. Զուլեյիթիոյ ձիւնէվրայի ժօտ, Եամպէզիի մէջ Պուսասիէի անուամբ ԲՈՒՍԱՅԷԷՄԻ Կայ¹ յորում կը գտնուին նաև բազմաթիւ Հայկական բոյսեր:

2. Մեծապէս փափաքելի է մեզ զոնէ այս տարի ստանալ խոստացուած անձնաւորութիւններէ Հայկական բոյսեր: Մենք մեր գրութեան մէջ ամէնուն արդիւնքը պիտի ցուցարկենք:

3. Թըքահայաստանի դարբներէնք և մաքսային պաշտնաները² ստէպ բացած են մեզ զրկուած ծրարներէ³ ու բոյսերու ընկերացած թղթիկները կամ շնչած

և կամ տեղագիտութեան են ու տունկերուն ալ շնասած: Երբեմն զրկուելի դարձուցած են⁴ արտասահման զրկուիլը արգելուած է ըսելով: Իսկ մին տեղեկացուց որ հաւաքածոյն վրան Հայաստանի բոյսեր գրած ըլլալուն համար, մաքսատան մէջ կրակ նետած են:

Դեռ մեր յոյժ շըլաբերական գրութիւններէն յանձնարարեալ եղածները Տաճկաստանէ մեզ իրադարձած⁵ վրան մուտքը արգիւնուած է գրուած: Անշուշտ տարեց յանձնարարութեան եղածներէն շատերը⁶ իրենց հասցէին չեն յանձնուած:

բոլորն աւերուցանուցինք։ վասն զի մեր Հայաստանը իտալիայէն աւելի հարուստ է բուսականութեան կողմանէ, վասն զի ի՞նչ իտալական Ֆլորան 4500) տեսակ բոյս կը բուսանայակէ, Հայկականը անոր կրկինքն պէտք է ունենայ։ Կարծեմք՝ կը խոստովանինք որ մեր մենչն ցարդ ըրածները կատարեալ չեն, այլ պէտք է կատարելագործել։ Բւ մենք համակարանով գործի տեսած ըլլալով՝ այժմ մեր ամբողջ կենքը աշխատելու եռանդը կը զգանք՝ կատարեալ ՀԱՅ-ԿԱԿԱՆ ԲՈՒՍԱՎԱԿԻՐՔ մը մեր թշուառ ազգին և Գիտութեան ընծայելու համար։ Այս մեր աւարտածառը աղօստ նմուշն է այն գործին՝ զոր կը փափաքինք ամբողջացնել՝ իսկ մեր ստացած ուղղութեան մէջ զանազան տարիներ ամբողջելով, և ապա երբ նիւթապէս և բարոյապէս կաշիքի ըլլալ մեզ, կանխորոշ ուղեգծի մը հետեւելով՝ այսինքն բուսաբանական յատուկ ճանապարհորդութիւն մ'ընելով մեր սիրելի Հայրենեաց բարձունքներուն վրայ, հովիտներուն մէջ, գետերուն և լճերուն եզերքները, միով բանիւ ամէն կողմէ։ Այս բանն անհրաժեշտ կարեւոր է ոչ միայն տուններ հաւաքելով՝ Հայկական բուսական ձեւացնելու համար, այլ նաև երկրաբուսաբանական, տեղային աշխարհագրական բուսա-կլիմայախօսական և այլ կարևոր պայմաններու հետախույն համար՝ որոնք միայն կը բնորոշեն երկրի մը ամբողջական Ֆլորային վիճակը։

Զետ մեր այս համառօտ բնաշարութեան՝ այժմ կ'անցնինք ցուցադրել թէ ինչ բոսած ենք սոյն աւարտածառն պատրաստելու համար։

Մենք անցեալ 1907ին սկսանք աւարտածառի նախապատրաստական աշխատութիւններն ընել, այսինքն Պուաստիէի 5 հատորներու մէջէն հաւաքեցինք այն բոյսերու անունները և բնավայրերը՝ որոնք Հայաստանի կը պատկանէին, պատրաստեցինք մեր ծրագրի զանազան գլուխներու նախագիծերը, մատենագիտական մասը և այլն. և հաւաքեցինք Վենետիկան գաւառին՝ զանազան կողմերէ հազարաւոր բոյսեր և արձակուրդի միջոց Պոլսի երթալով ժողովեցինք Պէոյլսը Ատաշե և Պրուսայէ բազմաթիւ տունկեր և բուսարան ձեւացուցինք՝ նպատակ ունենալով զանոց բաղդատել մեր Հայկական բոյսերուն հետ։ Իսկ բոյս մեր աշխատասիրութեան սկսանք 1908ին մայիսի սկզբը, ընդ ամէնք վեց ամիս։

Այս կարճ ժամանակամիջոցի մէջ մեր յարաւտեղութեամբ և բրօք. Ալիուստոյ Պէյիդոյի օրինաւոր ձեռնուղիները շնորհիւ, յաջողեցանք Հայաստանէ մեզի հասած բոյսերուն 1500) տեսակին ճեղքը և Սեռերը որոշել։ Զետ այս դասակարգական մեծագոյն էութիւնները որոշելու,

մեր ուսումնասիրութիւնը լրջութեամբ առաջ տարինք տեսակներու վրայ և կրցանք 330) փոքր էութեանց՝ այսինքն Տեսակներու անունները ուրոշել, և յետոյ կարելի եղաւ Կենթատեսակներու և ջանազանակներու անուններն ևս որոշել և անոց վրայ դիտողութիւններ ընել, և այլն՝ այնպէս որ մեր աւարտածառը գլխաւորաբար հիմնուած է անոց վրայ։

Սակայն պէտք չէ կարծիք որ պարզապէս նոյն բոյսերու լատիներէն անուններուն ցուցակը պատրաստած ենք, այլ մենք տուած ենք նաև Հայկական բոյսերու աշխարհագրական բնավայրերուն, անոց գործածութեան, անոց պատմութեան, մատենագիտութեան վրայ կարևոր տեղեկութիւններ, որով պատշաճ համարեցանք մեր աւարտածառը երկու մասերու բաժնել։ Ա. Ընդհանուր, Բ. Մասնական։

Զետ Զառաջաբանի ընդհանուր մասին (Parte generale) մէջ մենք ջանադիրք ամփոփել Հայաստանի աշխարհագրական պայմաններու վրայ ծանօթութիւններ՝ ինչպէս կը պահանջէր մեր ուսումնասիրութեան նիւթը։

Բնականաբար հարկ չկար չափազանց հմտութիւն ցուցադրել մահրամասնութեանց իշնելով, իսկ բաւ էր սահմանափակուիլ՝ այն ծանօթութիւններու վրայ՝ որոնք սերտ կապակցութիւն ունին բոյսերու աշխարհագրական ցրումին և երկրի կազմութեան վրայ։ Տեղեկութիւններ տուինք մեր երկրին հին և նոր սահմաններուն քաղաքական և տնտեսական բաժանումներուն վրայ՝ լեռնային, ջրաբաշխական, կլիմայախօսական, երկրաբանական, սպտմական և մարդաբանական ծանօթութիւններն շօշափողք՝ Կարձեալ այս ընդհանուր մասին ընկերացուցինք Հայաստանի բնական տեսարաններու պատկերներ՝ նպատակ ունենալով դիւրեմբռնել ընել տալ օտար երթորոշողներու Հայկական երկրին և մասնաւորապէս այն վայրերուն ամբողջութիւնը ուր բուսաբան ճանապարհորդներն այցելած և կամ մեր թղթականները բոյսեր հաւաքելով մեզ զրկած են։ Ի՞նչ աւելի ընդարձակ տեղեկութիւններ փափաքողները կը զրկեն մատենագիտական բաժնին մէջ, յորում բազմաթիւ գիրքերու անուններն տուած ենք՝ և որոնք մեր Ս. Ղազարու գրատան մէջ ևս կը գտնուին։

Բ. ՄԱՍՆԱԿԱՆ (Parte speciale) բաժինը կը բաղկանայ զանազան գլուխներէ։ Առաջինը պատշաճ համարեցանք նուիրել ԱՅՍԿԱՆԱՆ ՄԵՋ ԲՈՒՍԱՎԱԿԱՆ ԳԻՒՆՏԵՐԻՆ ԳԱՍՏՈՒԹԵԱՆ, որոնք համայնութեանց հետեւեալ՝ Կաւական Միջինկուրիս, Կախ - Լիւկալան, Զետ - Լիւկալան, Պուաստիիսկան, Զետ-Պուաստիիսկան շրջաններու մէջ։

Այս գլխուն պատշաճութիւնը ակն յայտնի է, ըլլալ իբր յարգանքաւ հաւատարմ մը այն ոչ սակաւ, և ստեպ քաջարի ու համեստ անձնաւորութեանց՝ որոնք անհեցուցած են Հայաստանի այս կամ այն կողմերու բուսականութեան ծանօթութիւնները, ըլլալ իբր ապացոյց հաւատարմութեան։

1. Մեր հաւաքած բոյսերուն մէկ մասին ուսումնական լատին անունները հրատարակեցինք Ուսումնական Ուղեգնացութիւն մը «Բնաբանական լատինական» անունով 40 էջ մեծազրկ և պատկերազարդ գրութեան մէջ։ (Տպ. Վենետ. Ս. Ղազար. 1908)։

սեխ մեր երկրի ներկայ վիճակին ծանօթութիւնը, ներք՝ վերջնական խուզարկութեանց և ուսում, նախան այցելութիւններու համեմատ:

Պուաստիէ իւր Flora Orientalis-ի ներածութեան մէջ ասոր օրինակը տուած է, մենք ջանացինք ամբողջացընել Հայկական մասը, մէջ բերելով բազմաթիւ տեղեկութիւններ և հայերէն ատոմապաշարաւորութիւններ. Նախ — լինէական շրջանին վերաբերող, և զայն ամբողջացուցինք վերջին քսան տարուան մէջ լոյս տեսած գրութեանց և ծանօթութիւններու յաւելումով:

Ասոր կը յաջորդէ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԻՍԱԿԱՆ ԱՆՇԻՄԻ ՀԱԳՐՈՒԹԻՒՆ, գլուխը: Տնկաբանական հմտութիւնը շատ յառաջացած չըլլալով և մենք չկարենալով Հայրենի երկրին այցելել, ստիպուեցանք սահմանափակ և համառօտ ակնարկներ լինել՝ Հայաստանի բուսական ինքնատիպ կազմութեանց, անտառներու, լեռներու, արմաշկա-դաշտերու (steppe) մասին և նաև մարդու միջամտութեամբ առաջ եկած տնկագործական և մշակական գլխաւոր օգտակար բոյսերու վրայ: Այս մասին մէջ զետեղած ենք նաև կարևոր գլուխ մը Հայկական տնկաբանութեան վերաբերող հոս-տարակալութիւններու՝ որոնք ըստ մեր տեղեկութեան 120 գրքերու մէջ կը բովանդակուին զանազան հեղինակներէ, զանազան լեզուներով գրուած:

Ուսումնասիրած բոյսերու չարքին անցնելէ առաջ, առանձին գլուխ մ'ալ նուիրեցինք, մեր թղթակցութիւններու արդիւնքը ցուցաբերելու և հայրենակիցներու անունները յիշատակելու համար՝ որոնք ձեռնտու գտնուեցան մեզ՝ կամ բոյսեր յղելով կամ օգտակար տեղեկութիւններ գրելով և կամ Մենեաս Կանդախանյանով՝ ինչպէս Ազոտա-մեծար Պ. Յ. Պալեանքը որ մեր բրած մաշէն ծախսերը գտցելու բարեքն ըրաւ:

Հաւ համառօտ տեղեկութիւնները գրած ենք այն պիտրերու վրայ ուսիցի մեզ բոյսեր հասած են՝ նպատակ ունենալով գիրքմբռնելի ընել իւրաքանչիւր բոյսի բնավայրին հանգամանքները:

Վերջին և ընդարձակագոյն գլուխն է բուն մեր ուսումնասիրած 340 բոյսերու ամբողջութեան վրայ դասական ոճով շարագրածը: Մենք շնանցած ենք արդի ուսումնական մեթոտի պահանջներն համեմատ քննադատելով ներկայացընել իւրաքանչիւր Հայկական բոյսը: Այս բանիս մէջ յաջողելու համար ոչ միայն Հայաստանի վերաբերող գլխաւոր բուսաբանական հեղինակութիւնները աչքէ անցուցինք, այլ նաև ուրիշ երկրներու պատկերազարդ ֆլորաներու, կամ այն ինչ բոյսերու սեռի վերաբերող մենագրութիւններու (monografia) հետ բաղդատեցինք՝ որոնք Բատալայի Տնկաբանական Պարտիզի գրատան մէջ կը գտնուին: Դարձեալ գրիթէ՛ ամէն բոյս նոյն Հաստատութեան Բուսաբանին մէջ բովանդակուած, Արեւելեան կամ Հայկական տուններու ցամաքածներուն հետ բաղդատած ենք, ինչպէս են Թ. Բալի, Հիւէ — սը — Բալդիոյնի, Օրֆանի-տէսի, Հէյտրիսի, Օշէր Էլուայի, Պուաստիէի, Նոյիի և այլոց կողմանէ ընծայուած բոյսերու նուշներու հետ, նաև Իտալական և Եւրոպական

տուններու հետ ալ բաղդատած ենք և տարբերութիւնները դուրս ցատկեցուցած:

Այսպիսի մանրակրկիտ բաղդատութիւնները ընելով մենք շատ տարբերութիւններ գտանք, ընդ մէջ մեր ունեցած իրական բոյսի և հեղինակներու ըրած նկարագրութիւններու և պատկերներու. ասով մեր ունեցած տարակոյսները փառանցան որոնք ամէն քայլափոխի ընդ առաջ կ'ընէին: Մենք հեղինակաւոր անձերու յրաժեշտներուն հետ բաղդատելով և զինելով կրցանք մեր ուսումնասիրած բոյսերու ինքնութեան՝ ապահով կ'ընէք մը տալ և ստոյգ ուսումնական և փինքերէն երկանունը որոշել:

Աականի պէտք ենք յաւելիլ որ մեզ զրկուած բոյսերէ գանախանք օրինակներ՝ անկատար վիճակի մէջ ըլլալով՝ չկրցանք մեր տարակոյսները փառաշէն, տարակոյսներ՝ որոնք այն ժամանակ միայն լուծուին պիտի զտնեն երբ Հայրենիքէն ստանալք բազմաթիւ և կատարեալ նմուշներ. իսկ անոնք որ արտաքոյ կարգի բազմատեսակ տուններու կը վերաբերին՝ անոնք պետք է որ ցուցնենք մասնագիտ մենագիրներուն:

Յետ այս իրողութիւնները պարզելու կը մնայ մեզ յայտնել որ դասաւորական (classificazione) բարձրագոյն տարրերու համար ինչպէս են դաս, կարգ, ցեղ, հետեւեցանք Իտալիոյ Վերլուժանի ֆլորայի կարգաբանութեան, զոր Բրօքսիօր Ա. Էնկելլի դասաւորութեան հետեւելով շարագրած են պատուաւրժան ուսուցիչներն Բաւէլլոյի, Ֆիօրի և Պլեկինոյ: Իսկ Սեռերու, Տեսակներու, Զանազանակներու դասաւորութեան միջոց՝ Պուաստիէի Flora Orientalis կարգաբանութեան հետեւեցանք, զիսն զի այդ կարևոր երկը մինչև ցարկ Արեւելեան բուսականութեան և նաև Հայկական ֆլորայի համար հիմնական մնացած է: Երբ հարկ եղաւ Պուաստիէի չհետեւի այդպիսի պարագայի միջոց դիտողութեան բաժնի մէջ՝ տունները մեր փոփոխելու պատճառները:

Մեր ուսումնասիրած բոյսերու ամբողջութիւնը, ինչպէս ըսինք կը բովանդակէ շուրջ 340 տեսակներ՝ որոնք կը բաժնուին 8 ակնյարդ անօրատուներու (Acotiledoni vascolari), 29 միարթրակներու և մնացածները գրեթէ 310 երկրթակներ են: Իբրև Յեղ 58 են և Սեռ 214:

Իբրև Սեռ (Leguminosae) և Ֆլորելներ են լոյսեղենները (Caryophyllaceae). Նրժնաճտիկներ (Labiate). Խաչաքեր տնկեր (Cruciferae). Գաղղիկուկներ (Borraginaceae). Հրժմուկներ կամ գորմուկներ (Ranunculaceae): Իսկ Տեսակներով բազմաթիւ Սեռերը ստոյն են, ճոճուկն (Cerastium). Մըծուկներ (Silene). Պոպրակներ (Hypericum): Ամսանոյսներ (Adonis). Դելփինումներ (Delphinium). Տրիգոններ (Trigonella). Առուպներ (Trifolium), Գաղղի (Astragalus). Խորեւիկներ (Geranium). Կտաւոյներ (Linus). Գարնա-նաճաղկներ (Primula), Երկկարկներ (O-

nosma) • Զարոններ (Teucrium) • Կոնսակ-
ներ (Salvia) • Էննամպեր (Lamium) • Մոծ-
ններ (Galium) • Տերեբուխներ (Centa-
urea) • և այլն •

Հագուսագիւտ եւ շանեկան տեսակներու
գալով իրենց աշխարհագրական բաշխումի
եւ ներկայացուցած քնադրոշմի կողմանէ
հետաքրքրական են հետեւանները, որոնց
լատիներէն անունները կը տանք միայն՝ եւ
որոնք գրեթէ ամէն ալ Եւրոպական Ֆլո-
րայի մէջ կը պակսին •

Agropyrum Triticum Gaertn

Allium cilicicum Boiss.

Asphodeline brevicaulis Gay.

Smilax excelsa L.

Iris caucasica Hoffm.

Arenaria holosteoides.

Cerastium dichotomum L.

C. inflatum Lk.

G. SACCARDOANUM Nersès D.

Silene spergulifolia Desf.

Chorispora syriaca Boiss.

Matthiola bicornis DC.

Hesperis campicarpa Boiss.

Aethionema cristatum DC.

A. Buxbaumii Fish.

Euslidium syriacum Br.

Ranunculus Cassius Boiss.

Potentilla geranioides Willd.

Trifolium Desvauxii Boiss.

Coronilla cappadocica Willd.

Astragalus densifolius Lam.

A. fragrans Willd.

Ebenus laguroides Boiss.

Bupleurum croceum Fenzl.

Prangos lophoptera Boiss.

Lisaea eterocarpa Boiss.

L. papyracea Boiss.

Polygala anatolica Boiss.

Linum tauricum Willd.

Haplophyllum myrtifolia Boiss.

Euphorbia herniariacifolia Willd.

Rhododendron ponticum L.

R. flavum Don.

Vaccinium arctostaphylon L.

Acantholimon Echinus Bung.

Onosma sericeum Willd.

Onosma flavum Lehm.

Rochelia stellulata Rchb.

Moltkia caerulea Willd.

M. angustifolia DC.

Verbascum armenum Boiss.

Stachys lavandulaefolia Vahl.

Salvia caespitosa Montb.

S. acetabulosa Vahl.

S. syriaca L.

Phlomis armeniaca Willd.

Galium orientale Boiss.

Valerianella Khotschy Boiss.

Val. leucophaca DC.

Campanula crispa Lam.

Achillea verniculata Trin.

Jurinea depressa Ster.

Centaurea Urvillei DC.

Mulgedium cacaliaefolium MB.

XERANTHEMUM BALIANII Nersès D.

ccc. ecc. —

Ամոնցմէ երկուքը Cerastium Saccar-
doanum, եւ Xeranthemum Balianii, Գի-
տութեան համար նորութիւններ էին՝ ուստի
սպառչած համարեցանք, մանրամասն նկա-
րագրութիւնը ընելով՝ շինել անոնց ստորո-
շուծեան եւ մասունքներու պատկերները ու
անոնց քնայիլը (habitus) եւ նշանագրոշմը
դուրս ցատկեցնել •

Իբրեւ գունազանգ (Varietà) նոր էր
Matthiola bicornis DC. Կոչ. VERSICOLOR
կոչածիս • Դոր էին նաեւ երկու սա են-
ծատեսակները Veronica macrostachya.
Vahl. subsp. CILICICA, եւ Scabiosa ar-
gentea L. subsp. SMITHII: Երկու նորա-
հմար մեր բաղկացուցիւնները (combina-
ison) եղան Vicia orientalis Nersès D.
փոխանակ Eryum orientale Boiss.ի եւ
Galium humifusum Nersès D. — Valan-
tia humifusa W. [1805] փոխանակ Ga-
lium coronatumի S. et Sm. [1806].

Չանագան տարրեր Պուստիէէ իբրեւ տեսակ
նկարագրութեանն էր վերածեցինք հնրատեսակի
կամ գանազանակի •

Բաւականաթիւ տեսակներ նոր համարեցինք
Հայկական Ֆլորայի համար, քանի որ անոնք
Պուստիէյէ դասական գործին կամ ուրիշներուն
աշխատասիրութեանց մէջ չեն նկարագրուած •

Հոս պէտք ենք յանելու նաեւ որ մենք իրա-
քանիւր տեսակին տուինք այն առաջին անունը
որով կոչուած էր առաջին անգամ երկսունուն
ամուսնակալուրեան մէջ¹, նկատի առնելով նաեւ
զանազան տեսական բաղկացութիւնները՝ որոնք
այժմեան անուանակալութենէ կը տարբերին •
Տունկերու իսկական անուններուն դիմաց տու-
ղեցինք իրենց գլխաւոր հոմանիշները՝ զանց չը-
նելով նաեւ թուրքերօրի գործածած բազմանուն
յորշորշումները •

Սոյն հոմանիշներու մեծամասնութիւնը Պուստ-
սիէէ առած միշտնիս Չանացինք Index Kewen-
sis-ի եւ ուրիշ բուսաբանական մեծիկ բառգիրք-

1. Վիեննա դասարտած 1906ի բուսաբանական Հա-
մաժողովի կանոնագրութեան հետեւելով •

ներու դիմելով՝ ուղղագրել, ճշդել և բազմացրել։ Դարձեալ՝ մեր ուսումնասիրած բոյսերուն դիմաց նշանակեցինք այն Հայկական բնավայրերը՝ որոնք Flora Orientalis-ի մէջ կը յիշուին։ Յետոյ տողեցինք ճշիւտ այն տեղւոյ անունը ուսկից այն ինչ բոյսը ժողովուած էր, զնեղով թուականը, զրկողին անունը, ռամկերէն կոչումը՝ եթէ բոյս յոգող գրած էր, և այլ գոհացուցիչ տեղեկութիւններ հաղորդեցինք։

Հազուագիւտ և քննադատելի տեսակներու ներքեւ մեր ըրած պատշաճութիւնները գրեցինք, մասնաւոր ընկելով անոնց բնորոշիչ յատկութիւնները՝ բաղադատմամբ մինչև ցարդ եղած նկարագրութիւններու։ Նաև պարզեցինք իտալական կամ էսթրոպական խոյսերու հետ մեր ըրած բաղադատութիւններու արդիւնքը և տարբերութիւնները՝ որոնք որոշապէս կը տեսնուին Հայկական և օտար երկիրներու ցամաքած նմուշներու և բազմազանի պատկերներու վրայ։

Երեք էջի մէջ ալ մեր եզրակացութիւնը—բաժնի փոփոխութիւնը տողեցինք մեր այս ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՍԱԳՐՈՒՄ նախափորձին բովանդակած զբաղակարգութիւններու և տունկերու անուններուն ցանկը։

Արքունի Հաստատութիւն

էւ Տնիքաբանական Պարտէզ Բաժնախի.

5 Յունիս 1908

Ստորագրութիւն,

Մենք մեր ձեռնարկներուն վրայ սոյն տեղեկութիւնները տալէ վերջ կը համարձակինք խնդրելու բանիմաց և հայրենասէր անձերէ որ բարեհաճին բովանդակ Հայաստանի ամէն կողմերէն մեզի համար բազմաթիւ տունկեր բուսաբաղել տալով յիշել մեր Ս. Վազարու հասցէին։ Այս բանիս Ազգային լրագրութեան արձագանք ըլլալն անհունապէս նպաստելուն վրայ վստահ ըլլալով՝ կը հաւատենք որ անոնց ձեռնտուութեամբ մեր ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՍԱԳՐԱՆԸ հաստատուն գոյութիւն մը պիտի ունենայ և առաջինը պիտի ըլլայ Գիտական աշխարհի մէջ՝ քանի որ ո՛չ թիֆլիզ, ո՛չ Բեռլինպոլս, ո՛չ Մոսկուա և ո՛չ որ և է Եւրոպական Հաստատութիւններու մէջ զուտ Հայկական Բուսաբանի մասնաճիւղ մը չկայ։

Յաջողութիւնը կախումն պիտի ունենայ մեր բարեսէր ազգայնոց հոգածութենէն։

Հ. ՆՅՐՍԵՍ Տ.

Տօթոր Գիտութեանց

ԼԱՏԻՆ ԼԵԶՈՒՆ

ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՆԱԽՆԵԱՑ ՔՈՎ

Ղ. Փարպեկոյ բաշյրն առ Վահան Մամիկոնեան և Ս. Երսեռոսի Յոյցք առաքելական քարոզարեանն.

Այսպիսի վերնագիր մը անշուշտ մտածել պիտի տայ իսկոյն Ստեփանոս Լեհացի մը լատին գիրքերու թարգմանութեամբ զբաղած, Պալենց մը որ կայսերաց և ճահանայակետաց գաւազնագիրքը կը յօրինէ լատին բնագրի հետեղութեամբ, Միաբանող Եղբայրներ որ հայ լեզուն և քերականութիւնը կը ձեռն լատիներէնի վրայ, Լամբրոնացի մը որ հոռոմէական եկեղեցւոյ ծէսեր և հանդերձանք կը հիւրասիրէ հայ կաթողիկէի ներքեւ։ Եւ պիտի դժուարի մարդ յիշողութեան սահմաններն ընդարձակելով դեռ աւելի ևս բարձրանալ դարերու սանդղոց վրայ և հանդիպել արդէն եօթներորդ դարու մէջ երկու հայ վանքերու Հոռոմայ մէջ իսկ, և դար մ'ալ առաջ՝ հայ վաճառականներու որ Աղեքսանդրիայէ կը մեկնին ի Հոռոմ տանելով ի միասին Ս. Մինասայ պաշտօնը, և կամ կէս դար մ'ալ աւելի վեր՝ գտնել Հոռոմայ շրջակայից մէջ Խորենացի մը որ ալեկոծութենէ ազատած կը թափառի հոն և գիտէ արդէն Սորակոտէ բլրոյն սրբազան աւանդութիւնները։

Ի զուր է դեռ աւելի բարձրանալ հին ժամանակագրաց վրայ հիմնուած՝ տեսնելու համար ներոնի կայսերական գահոյից ըով ամիթիթատեր մէջ բազմած թագազարդ Տիրիթը, որուն անդրին հաւանականաբար կը դիտենք մինչև այսօր Վատիկանու թանգարանին մէջ քարաքրու քաղաքի—ի յորջորջման տակ։ Բաւական է մեզ համար կենալ հինգերորդ դարու սեմոց վրայ և դիտել մեր ոսկեղէն գրականութեան երկու գահաւորներու հոռոմէական շրջագիծերը.—Վազար Փարպեցւոյ առ Վահան Մամիկոնեան զբաղ թուղթը, և Ս. Երսեռոսի